ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«01» 09 2025 թ.
№ ԱՊՏՄ2/1364

«Կտավ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 01032837
ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 17
էլ. փոստի հասցե՝ info@ktavprint.am
Հեռ.՝ +374 94 57 19 19

ՀՀ պաշտպանության նախարարության և «Կտավ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 28.02.2025թ. կնքված N ԳՀԾՁԲ-25-8/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր N 1, առ. 09.06.2025թ/ Ընկերությունը պետք է մատակարարեր 2024 հատ նոթատետրեր /այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն/ Համաձայնագրի կնքումից հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում ընկերությունը մատուցել է պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետը ՝ (Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն) ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.09.2025թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Կտավ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2 872 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն) և 5 222 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 24.06.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 59 303 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 88 955 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 11-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 59 303 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 88 955 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Կտավ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. սեպտեմբերի 11-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2074 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝ **Կ.ԲՐՈՒՏՅԱՆ**